

Բյուջեի ղեկիցիտը 1997-2006 թթ. յուրաքանչյուր նախորդ տարվա համեմատությամբ ունեցել է աճման տեմդեդ: Բացառություն կազմում են 2000, 2002, 2004 թթ.: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ղեկիցիտի նվազեցումները համապատասխանաբար 10,5, 23,9 և 9,2 տոկոսային կետով պայմանավորված են բյուջեի ծախսերի աճի նկատմամբ եկամուտների տոկոսային և գումարային առաջանցիկ աճով: 2000 և 2002թ. դրամը համապատասխանաբար կազմել են՝ 3,6 և 8,1 տոկոսային կետ կամ 5935,1, 12843,3 մլն. դրամ: Ինչ վերաբերում է 2004 թ., ապա այստեղ 9,2 տոկոսային կետով նվազեցումը պայմանավորված է և՛ ծախսերի (17199,5 մլն. դրամ, 5,1%), և՛ եկամուտների (12857,3 մլն. դրամ, 4,5%) գումարային նվազումով:

Մնացած տարիներին պետական բյուջեի ղեկիցիտը գրեթե անընդհատ աճել է: Դա պայմանավորված է նրանով, որ ծախսերի աճի նկատմամբ եկամուտների տոկոսային առաջանցիկ աճ ստանալու համար եկամուտների և ծախսերի աճի տարբերությունը կազմել է բացասական մեծություն: Այսպես, 1999, 2001, 2003, 2005 թթ. բյուջեի ղեկիցիտն աճել է համապատասխանաբար՝ 11,2, 6,2, 15,3, 14,8 տոկոսով կամ 5699, 3149, 6270 և 6337 մլն. դրամով:

Շուկայական տնտեսության անցման փուլում գտնվող երկրներում պետական ծախսերի նվազ մեծացման պայմաններում հարաբերականորեն կրճատվում են բյուջեի մուտքերը: Դա հանգեցնում է նոր ու ավելի ծավալուն բյուջետային ղեկիցիտի, և այդպես շարունակ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ 2000թ. նախորդ տարվա նկատմամբ բյուջեի ղեկիցիտը նվազեցվեց 5935 մլն. դրամով և սահմանվեց 50 մլրդ. 683 մլն. դրամ, իսկ պետական բյուջեի ծախսերի հավելաճը սահմանվեց ընդամենը 4470 մլն. դրամ՝ նախորդ տարվա 36608 մլն. դրամի դիմաց: Այդ մոտեցումների բացասական հետևանքներն իրենց երկար սպասել չտվեցին: Այսպես, դրամը պատճառ հանդիսացան այն բանին, որ 2001թ. պետական բյուջեն կազմեց առավել մեծ ղեկիցիտով և սահմանվեց՝ 53832,2 մլն. դրամ, որը 3149,3 մլն. դրամով գերազանցում էր նախորդ տարվա ղեկիցիտի չափը:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ ամբողջ ժամանակաընթացքում տեղի են ունեցել համախառն ներքին արդյունքի կայուն աճ: Ընդ որում, եթե 1997-2001 թթ. աճը կազմել է գրեթե 1,5 անգամ, ապա 2002-2006 թթ. այն աճել է 2,26 անգամ:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև բյուջեի ղեկիցիտի հավելաճի աղբյուրների վերլուծությունը (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Բյուջեի ղեկիցիտի հավելաճի աղբյուրները 1998-2006 թթ.

(մլն. դրամ)									
Ցուցանիշներ	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Դեֆիցիտի հավելաճը նախորդ տարվա նկատմամբ, այդ թվում՝	16944	5699	-5935	3149	-12843	6270	-4342	6337	20584
ա) ի հաշիվ եկամուտների փոփոխության	42846	30908	10405	-8698	25759	67821	-12857	71224	67010
բ) ի հաշիվ ծախսերի փոփոխության	59790	36607	4470	-5549	12916	74091	-17199	77561	87594

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ ղեկիցիտի հավելաճն ուղղակիորեն պայմանավորված է եկամուտների նկատմամբ ծախսերի գումարի կտրուկ փոփոխությամբ: Օրինակ՝ 2000, 2002 և 2004 թթ. ղեկիցիտի հետաճը նախորդ տարիների նկատմամբ ապահովվել է այդ տարիների ծախսերի հարաբերական կրճատումով, որն ևս փաստում է, որ բյուջեի ղեկիցիտի պատճառներից մեկը ծախսերի ոչ արդարացված չափերն են: Օրինակ՝ դա էլ հանդիսացել է 1998, 2003, 2005 և 2006 թվականների ղեկիցիտի աճի հիմնական պատճառը:

ՍԵՎԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսավարման նոր պայմաններում էլ ավելի է կարևորվում բանկային համակարգի դերը ՀՀ տնտեսության տնտեսական աճի ապահովման գործում: Ուստի այդ առումով, ինչպես առևտրային բանկերը, այնպես էլ մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության կարգավորման համար պետք է ունենան դրամական միջոցների որոշակի գումար կամ այլ կերպ՝ ռեսուրսներ: Վերջիններս իրենցից ներկայացնում են սեփական և ներգրավված միջոցների այն ամբողջականությունը, որոնք գտնվում են նրանց տնօրինության ներքո ու օգտագործվում են ակտիվային գործառնությունների իրականացման համար:

Ուստի, առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքը բանկի գործունեության իրականացումն է սեփական և ներգրավված միջոցների շրջանակներում: Սա, մասնավորապես նշանակում է, որ բանկերը պետք է ապահովեն բանակական համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև:

Բանկերը վճարունակության և իրացվելիության խնդիրներից խուսափելու նպատակով պետք է ապահովեն ոչ միայն բանակական, այլ նաև ժամկետային համապատասխանություն իրենց ռեսուրսների և

ներդրումների միջև: Այսինքն, ցանկացած ներդրումային գործառնություն իրականացնելիս յուրաքանչյուր բանկ պետք է հատուկ ուշադրություն դարձնի տեղաբաշխվող միջոցների ձևավորման աղբյուրներին¹:

Այս սկզբունքը ուղղորդվում է բանկին ներգրավման նպատակով փնտրել ցածր ծախսատար և երկարաժամկետ միջոցների աղբյուրներ, ինչպես նաև ներդրման նպատակով էլ ավելի ցածր վտանգ ու բարձր եկամտաբերություն ապահովող ներդրումային ուղղություններ: Հենց այստեղ էլ կատարվում է բանկային կապիտալի տեղափոխումը դեպի ավելի շահութաբեր և արդյունավետ ճյուղեր:

Բանկի սեփական միջոցները նրա ակտիվների ու պարտավորությունների տարբերությունն է, որն անվանվում է ընդհանուր կամ սեփական կապիտալ: Այս հասկացությունն իրենում ներառում է բանկի բաժնետերերի կողմից կատարված ներդրումները (կամ այլ կերպ կանոնադրական կապիտալը), գլխավոր պահուստը, չբաշխված շահույթը և այլ պահուստները: Վերոնշյալներից բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի գումարի չափը նրա գոյության տնտեսական հիմքն է և պարտադիր պայմանը բանկի՝ որպես իրավաբանական անձի կազմավորման համար: Իր հերթին գլխավոր պահուստը ստեղծվում է բանկի տրամադրության տակ մնացած գույք շահույթից (հարկումից հետո) նրա գործունեության ընթացքում առաջացող չկանխատեսված կորուստները հատուցելու նպատակով և ապահովում է ֆինանսական կայունությունն ու գործարար ակտիվությունը: Գլխավոր պահուստի մեծությունը սահմանվում է բանկի կանոնադրությամբ՝ սովորաբար փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նկատմամբ տոկոսներով: Միաժամանակ բանկի կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև գույք շահույթի հաշվին ձևավորվող այլ պահուստներ՝ սպառման, կուտակման, բաժնետիրացման, շահաբաժինների վճարման և այլ հիմնադրամների ձևերով²:

Այստեղից հետևություն, որ բանկի ընդհանուր (սեփական) կապիտալի գումարի չափը մեծ նշանակություն ունի նրա գործունեության համար և պատահական չէ, որ կարգավորող մարմինները սահմանում են այդ կապիտալի անհրաժեշտ նվազագույն չափը: Այն երբեմն հանդես է գալիս որպես տարածայնություններ բանկիրների և վերահսկողների միջև: Ըստ որի վերահսկողները սովորաբար պահանջում են ավելի շատ ընդհանուր կապիտալ՝ պատճառված կորուստների և ռիսկի փոխհատուցման տեսանկյունից, իսկ բանկերն էլ իրենց հերթին նախընտրում են ավելի քիչ կապիտալ՝ հիմնադիրների կողմից ներդրված միջոցներն էլ ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

Միջազգային փորձը վկայում է, որ բանկային ռեսուրսների ընդհանուր ծավալում ներգրավված միջոցները, կամ այլ կերպ պարտավորությունները, գերակշիռ մաս են կազմում, որոնք պայմանավորում են բանկի հուսալիությունը: Ուստի այդ առումով էլ շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ՀՀ բանկերի ներգրավված միջոցների կառուցվածքում էական փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք հիմնականում պայմանավորված են բանկերի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանցից ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրման նոր եղանակների առաջացմամբ:

Ներգրավված միջոցներ են հանդիսանում այն դրամական միջոցները, որոնք չեն պատկանում տվյալ բանկին, սակայն ժամանակավորապես, մինչև վերադարձը, գտնվում են նրա տնօրինության ներքո:

Միջազգային բանկային պրակտիկայում ներգրավված միջոցները, ըստ հավաքագրման աղբյուրների, խմբավորվում են.

- ավանդների (դեպոզիտների),
- ոչ ավանդային ներգրավված միջոցների:

Առևտրային բանկերի ներգրավված միջոցներում (պարտավորություններում) զգալի տեսակարար կշիռ են կազմում բանկային ավանդները, այսինքն՝ այն դրամական միջոցները, որոնք դրվել են բանկում՝ պահպանելու կամ տոկոսային եկամուտ ստանալու նպատակով: Ավանդներում տեղաբաշխվող միջոցների հիմնական աղբյուրներն են իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշիվներում գտնվող միջոցները, որոնք նրանց կողմից օգտագործվում են բանկային հաշվի ռեժիմին և բանկային օրենսդրությամբ համապատասխան:

Իրենց հերթին ոչ ավանդային ներգրավված միջոցները, դրանք այն են, որոնք բանկը ստանում է փոխառությունների տեսքով կամ դրամական շուկայում սեփական պարտքային պարտավորությունների վաճառքի միջոցով: Այս միջոցներն ավանդներից (դեպոզիտներից) տարբերվում են նրանով, որ առաջին հերթին ունեն ոչ անձնական բնույթ, այսինքն չեն կապվում տվյալ բանկի կոնկրետ հաճախորդի հետ, այլ ձեռք են բերվում դրամական շուկայում և երկրորդ հերթին այդ միջոցների ներգրավման նախաձեռնությունը պատկանում է հենց իրեն՝ բանկին:

Իսկ թե ինչպիսին է ներգրավված միջոցների կամ այլ կերպ բանկային պարտավորությունների դինամիկան և դրանց փոփոխությունները ՀՀ առևտրային բանկերում ներկայացնենք թիվ 1 աղյուսակի տեսքով³:

Թիվ 1 աղյուսակի տվյալներից պարզվում է, որ 2007թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործող 21 առևտրային բանկերի ընդհանուր կապիտալում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում «ԱԿԲԱ - կրեդիտ - ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ը, որը կազմում է 15,23% և այն ունեցել է աճման միտում նախորդ տարվա նկատմամբ 10,7 մլրդ. դրամի չափով, իսկ հարաբերական շեղումը՝ 141,3%: Այնուհետև ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ը, որը կազմում է 9,24%, իսկ ամենացածր տեսակարար կշիռը բաժին է ընկնում «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ը: Վերլուծությունից միաժամանակ պարզվում է, որ բոլոր 20 բանկերի գծով ընդհանուր կապիտալի աճման միտում է նկատվել, բացի «ԻԹԲ միջազգային բանկ» ՓԲԸ գծով և այդ նվազումը կազմել է 48,5 մլն. դրամի չափով:

¹ Батракова Л.Г. Экономический анализ деятельности коммерческого банка. М., 1999, 344 с.

² Թառումյան Գ. Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքներ, Երևան 2003, 144 էջ:

³ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն 2004, 2005, 2006 թթ.:

ՀՀ բանկային համակարգում գործող առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի դինամիկան,
փոփոխությունը և տեսակարար կշիռը ընդհանուր համակարգում ըստ 2003-2006թթ. վերջի դրությամբ

Զբաղեցրած տեղն՝ ըստ կապիտալի մեծության առ 01.01.2007թ.	Բանկի անվանումը	31.12.03թ.		31.12.04թ.		31.12.05թ.		31.12.06թ.		Շեղումը (+,-) (վերջին երկու տարիների կտրվածքով)	
		հազ. դրամ	կշիռը ընդհանուր տես. համակարգում, %	հազ. դրամ	կշիռը ընդհանուր տես. համակարգում, %	հազ. դրամ	կշիռը ընդհանուր տես. համակարգում, %	հազ. դրամ	կշիռը ընդհանուր տես. համակարգում, %	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %
1	«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ	5,418,495	12.18	6,039,416	9.34	7,578,952	7.99	18,288,619	15.23	10,709,667	141.31
2	«Արդշինմիմստ-բանկ» ՓԲԸ	3,646,762	8.20	5,435,159	8.40	8,876,118	9.35	11,096,250	9.24	2,220,132	25.01
3	«Կոմվերս բանկ» ՓԲԸ	3,375,388	7.59	6,027,333	9.32	8,995,487	9.48	9,580,181	7.98	584,694	6.50
4	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	2,596,348	5.84	3,603,292	5.57	8,601,763	9.06	9,333,502	7.77	731,739	8.51
5	«Էյ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	4,822,947	10.84	5,432,361	8.40	6,299,271	6.64	7,219,705	6.01	920,434	14.61
6	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	3,035,039	6.82	3,961,784	6.13	5,566,532	5.87	6,880,911	5.73	1,314,379	23.61
7	«Ինեկոբանկ» ՓԲԸ	2,003,998	4.51	2,952,009	4.56	3,954,769	4.17	6,130,918	5.11	2,176,149	55.02
8	«Ամելիք բանկ» ՍՊԸ	2,280,364	5.13	3,141,621	4.86	4,033,089	4.25	4,813,890	4.01	780,801	19.36
9	«Կասկադ բանկ» ՓԲԸ	1,321,706	2.97	1,365,596	2.11	7,632,950	4.88	4,678,098	3.90	45,148	0.97
10	Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	2,922,094	6.57	3,251,698	5.03	3,843,544	4.05	4,345,039	3.62	501,495	13.05
11	«Արցախբանկ» ՓԲԸ	1,908,839	4.29	2,598,119	4.02	3,229,278	3.40	3,962,275	3.30	732,997	22.70
12	«Արարատ բանկ» ՓԲԸ	-5,543,093	-12.46	1,383,057	2.14	2,475,680	2.61	3,833,953	3.19	1,358,273	54.86
13	«Յունիքբանկ» ՓԲԸ	2,975,480	6.69	2,990,888	4.62	3,215,133	3.39	3,793,438	3.16	578,305	17.99
14	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	2,241,971	5.04	2,939,174	4.54	2,908,777	3.07	3,789,967	3.16	881,190	30.29
15	«Մեյլար բանկ Հայաստան» ՓԲԸ	1,537,874	3.46	1,909,311	2.95	2,951,135	3.11	3,701,112	3.08	749,977	25.41
16	«Հայմեդարտբանկ» ՓԲԸ	2,483,127	5.58	2,844,816	4.46	3,172,999	3.34	3,391,101	2.82	218,102	6.87
17	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	1,215,671	2.73	1,122,344	1.74	3,040,952	3.20	3,255,588	2.71	214,636	7.06
18	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	1,876,007	4.22	3,173,663	4.91	2,904,669	3.06	3,180,987	2.65	276,318	9.51
19	«Արմավիսբանկ» ՓԲԸ	-	-	-	-	2,978,309	3.14	3,063,882	2.55	85,573	2.87
20	«ԻԹԲ Միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	2,992,274	6.73	3,093,624	4.78	3,072,132	3.24	3,023,632	2.52	-48,500	-1.58
21	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	1,370,154	3.08	1,373,545	2.12	2,563,691	2.70	2,717,540	2.26	153,849	6.00
	Ընդամենը	44,481,445	100	64,678,810	100	94,895,230	100	120,080,588	100	25,185,358	26.54

Ի տարբերություն մնացած տնտեսվարող սուբյեկտների դեռևս ընդհանուր կապիտալի գումարի չափով չի կարելի բնութագրել յուրաքանչյուր բանկի ֆինանսական կայունությունը, ուստի այդ առումով կարևորվում է պարտավորությունների գումարի չափը: Վերջիններիս դինամիկան, տեսակարար կշիռներն ու փոփոխությունները ներկայացնենք թիվ 2 աղյուսակի տեսքով¹:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ըստ ուսումնասիրվող 4 տարիների պարտավորությունների տեսակարար կշիռը 21 առևտրային բանկերի ընդհանուր պարտավորություններում ամենամեծը կազմում է «Էյ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ գծով, որը 2003թ. վերջի դրությամբ եղել է 25,64%, իսկ 2006թ. վերջի դրությամբ՝ 17,21%: Չնայած ունեցել է նվազման միտում, սակայն բանկը դեռևս գտնվում է հուսալի վիճակում և նույնիսկ առ 01.01.2007թ. դրությամբ պարտավորությունների մեծությամբ, մոտավորապես 72 մլրդ. դրամի չափով զբաղեցնում է առաջին տեղը: Երկրորդ տեղում է ընթանում «Արդշինմիմստբանկ» ՓԲԸ-ը, որը այդ

¹ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն 2004, 2005, 2006 թթ.:

նույն տարվա դրությամբ ունեցել է 58 մլրդ. դրամ պարտավորություններ և ուսումնասիրվող տարիներում ունեցել է աճման միտում: Վերլուծությունից պարզվում է նաև, որ վերջին երկու տարիների կտրվածքով պարտավորությունների նվազում է նկատվել «Կոմվերս բանկ», «Արցախբանկ», «Առեկսիմբանկ», «Հայներարտբանկ» ՓԲԸ-երում, համապատասխանաբար 6,75; 2,3; 0,88 և 1,28 մլրդ. դրամի չափով:

Հատկապես այն ակնառու է «Կոմվերսբանկ» ՓԲԸ-ում, որն արդյունք էր հաճախողներից միջոցների ներգրավման ոչ ճիշտ քաղաքականության վարմանը: Այժմ բանկն այդ թերությունն աստիճանաբար վերացնում է և գտնվում է պարտավորությունների ներգրավման ու վարկերի տրամադրման ճիշտ ուղու վրա: Անվաճից կարելի է գալ այն հետևության, որ յուրաքանչյուր բանկ հուսալի վիճակում գտնվելու համար, որպես ամերաժեշտ պայման պետք է ըստ բանկային նորմատիվների ունենա սահմանված չափով ընդհանուր կապիտալ և պարտավորություններ ու պահպանի նորմայի սահմաններում դրանց հարաբերակցությունը: Վերոնշյալների վերլուծության կանդիդատանքը հետագա մեր աշխատանքներում:

Աղյուսակ 2

ՀՀ բանկային համակարգում գործող առևտրային բանկերի պարտավորությունների դինամիկան, փոփոխությունը և տեսակարար կշիռը ընդհանուր համակարգում ըստ 2003-2006թթ. վերջի դրությամբ

Զբաղեցրած տեղը՝ ըստ պարտավորությունների մեծության առ 01.01.2007թ.	Բանկի անվանումը	31.12.03թ.		31.12.04թ.		31.12.05թ.		31.12.06թ.		Ծեղումը (+,-) (վերջին երկու տարիների կտրվածքով)	
		հազ. դրամ	տես. կշիռը ընդհանուր համակարգում, %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհանուր համակարգում, %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհանուր համակարգում, %	հազ. դրամ	տես. կշիռը ընդհանուր համակարգում, %	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %
1	«ԷՆՋ-Էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ	62,405,261	25.64	61,211,471	20.03	64,868,682	18.10	72,988,668	17.21	8,119,986	12.52
2	«Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ	17,668,240	7.26	32,818,353	10.74	45,451,148	12.68	58,054,806	13.69	12,603,658	27.73
3	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	15,882,368	6.53	23,516,732	7.69	29,194,517	8.15	37,071,369	8.74	7,876,852	26.98
4	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	20,542,127	8.44	36,320,761	11.88	32,758,089	9.14	36,315,734	8.56	3,557,645	10.86
5	«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ	12,251,319	5.03	18,356,229	6.01	28,639,271	7.99	34,504,828	8.14	5,865,557	20.48
6	«Յունիբանկ» ՓԲԸ	10,749,912	4.42	10,100,202	3.30	16,169,330	4.51	27,189,606	6.41	11,020,276	68.15
7	«Կոմվերս բանկ» ՓԲԸ	21,878,682	8.99	27,065,697	8.86	32,715,755	9.13	25,962,073	6.12	-6,753,682	-20.64
8	«Անեկո բանկ» ՍՊԸ	12,261,551	5.04	14,735,346	4.82	20,039,173	5.59	24,779,357	5.84	4,740,184	23.65
9	«Արցախբանկ» ՓԲԸ	11,148,044	4.58	21,800,894	7.13	21,229,606	5.92	18,918,854	4.46	-2,310,752	-10.88
10	«Ինեկոբանկ» ՓԲԸ	6,192,678	2.54	8,384,433	2.74	12,846,204	3.59	16,313,472	3.85	3,467,268	26.99
11	«Հայրիգնեսբանկ» ՓԲԸ	7,692,195	3.16	4,540,960	1.49	6,895,758	1.92	13,889,969	3.28	6,994,211	101.43
12	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	6,095,380	2.50	7,585,864	2.48	11,353,274	3.17	10,471,280	2.47	-881,994	-7.77
13	«Հայներարտբանկ» ՓԲԸ	11,206,348	4.61	10,120,411	3.31	9,193,642	2.57	7,909,464	1.87	-1,284,178	-13.97
14	«Արմավիսբանկ» ՓԲԸ	-	-	-	-	3,034,316	0.85	6,715,042	1.58	3,680,726	121.3
15	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	345,802	0.14	206,338	0.07	2,249,430	0.63	6,312,249	1.49	4,062,819	180.61
16	«Մեյլար բանկ Հայաստան» ՓԲԸ	4,438,485	1.82	7,393,891	2.42	5,651,337	1.58	5,656,760	1.33	5,423	0.09
17	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	9,036,484	3.71	8,082,679	2.64	5,353,308	1.49	5,465,353	1.29	112,045	2.09
18	«Արարատ բանկ» ՓԲԸ	6,172,472	2.54	3,933,006	1.29	1,495,162	0.42	4,708,119	1.11	3,212,957	214.9
19	«Պրոմբեյ բանկ» ՍՊԸ	1,835,838	0.75	3,095,273	1.01	2,922,599	0.82	4,206,331	0.99	1,283,732	43.92
20	«Կասկադ բանկ» ՓԲԸ	4,389,126	1.80	4,496,476	1.47	4,090,662	1.14	4,126,623	0.97	36,961	0.88
21	«ԻԹԲ Միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	1,158,622	0.48	1,876,722	0.61	2,169,466	0.61	2,525,059	0.60	355,593	16.39
	Ընդամենը	243,350,934	100	305,641,738	100	358,320,729	100	424,085,016	100	65,764,287	18.35